

„Droschak”

ORGANE
de la Fédération

Révolut. Arménienne.

 Adresses
BÉDÁCTION DU JOURNAL
„Droschak”
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՎԱՍԿՅՈՒԹԵԱՆ ՕՐԳԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՐԻՔ

III

Ազգային մեր առանձնայատկութիւնների պայմանը, բացի իր տեսական նշանակութիւնից, որով, իմիջի այլ պատճառների, լուսաբանուում է հայ յեղափոխական շարժման ներկայ դրութիւնը, — կարևորութիւն է ստանում և որոշ գործնական տեսակէտերից:

Այդ ինդիքը պէտք է պարզեն իրենց համար բոլոր մեր ընկերները, որպէսզի ամենօրեայ այն բազմաթիւ խոչընդոտները, որ նրանք պատահում են իրենց գործունէութեան ընթացքում, չնեմացնեն նրանց աշխում յեղափոխական՝ գաղափարի կամ յեղափոխական տաքատիկի նպատակայարմարութիւնը և այդպիսով չթուլցնեն նրանց հաւատն ու եռանդը:

Դա պէտք է պարզեն իրենց համար մեր բոլոր գաղափարակիցները, որովհետև ներկայ ծանրագոյն պատմական շրջանը ունի հայութեան բարոյական ու ռազմական բնազդներին աւելի ևս վնասելու բոլոր թունաւոր յատկութիւնները:

Դա պէտք է իմանան յեղափոխական կուի բոլոր համակիր տարրերը, որովհետև չկայ լաւագոյն աւազան մեր պատմական կեղուերից մաքրւելու համար՝ քան զոհի և անձնւիրութեան այն ուղին, որի վրայ կանգնած են իրենք, ինչպէս և չկայ աւելի դրական միջոց չառիք իր արմատում լսեղելու համար՝ քան կարող են լինել ազատ կեանքի նոր, փրկարար պայմանները, արխիքն յեղափոխական կուի նպատակը:

Պարզենք մի քանի խօսքերով այս կէտերը:

Ահա հայ յեղափոխականի դէմ առ դէմ կանգնած է մի ուրիշ հայ, որն անտարբեր է դէպի առաջինին այրող հոգսերը: Ահա միւսը, որ չէ աշակցում նրան, պատճառաբանելով որ ծանօթ չէ նրա կազմակերպութեան ընթացքին: Ահա մի երրորդը, որ իր բոնած դիրքը բացատրում է յեղափոխական հայեացքների տարբերութեամբ: Ահա մի չորրորդը, որ հակառակ է նրան իր՝ „Հիմնական համոզմունքներով”...

Ըստ բարեմիտ պէտք է լինեինք, լնդունելով որ այդ սոլոր դէպքերը ունեն իրենց աւելի կամ պակաս չափով բանաւոր պատճառները:

Եւ իրաւ: Եթէ մարդիկ իրենց անտարբերութիւնը արդարացնելու համար բերաններն են առնում, ո՞նչ կարող եմ անել այն ժամանակ, երբ բնաւ փորձ չեն արել իմանալու: Եթէ ի՞նչ կարելի է առհասարակ անել կամ երբէք նոյնիսկ ամենատարական պարտականութիւնները յիշեցնող խորհուրդների չեն հետեւ: Եթէ մարդիկ իրենց բունած դիրքը բացատրում են նրանով որ աներ գործերի հետ ծանօթ չեն այն ժամանակ, երբ ոչ մի քայլ չեն արել և չեն էլ ուզում անել այդ գործերի հետ ծանօթանալու համար. Եթէ մարդիկ հակառակում են ձեզ՝ պնդելով որ աներ ընթացքը նրանք նպատակայարմար չեն համարում այն ժամանակ, երբ գաղափար չունեն կուի ձեր եղանակի վրայ և յաճախ չեն էլ կարող ունենալ որովհետև նախ ժամանակի ընթացքում փոխւում է կուի ձեր տաքտիկը և երկրորդ՝ միշտ նա մննում է ներքին գաղանդիք. Եթէ մարդիկ ուզում են ձեզ հաւատացնել՝ թէ իրենք ոորիշ համոզմունքներ են գաւանում այն ժամանակ, երբ կամ ոչինչ չեն անում ոչ մի տեսակ համոզմունքների համաձայն կամ յանուն գերագոյն շահերի միայն թունաւորում են հասարակական կարծիքը և կամ օրուդիշեր օդը թնդացնում են յանուն բանսորական ոյաւելեալ աշխատանքին, բայց մնում են ստօիկեան սառնասիրաներ մի ամբողջ ժողովրդի յաւելեալ արեան գիմաց. Եթէ մարդիկ խելսգարների յատուկ ապշութեամբ շարունակ հերքում են ուրիշների բացայատ արժանաւորութիւններն այն ժամանակ, երբ դրանք ամենայանդունգն լըբութեամբ անպայման յարգանք են պահանջում դէպի իրենց ակներեւ ախտերը, շառլատանութիւնները և ամբարտաւան, տղեզ մաքի եսամոզ ցատկուումներն անդամ, — մենք, թո՛ղ ներքի այդ մեզ չենք կարող այս դէպքերից և ոչ մէկում զգալ մեզ ուշադրութեան արժանի հակառակորդների դիմաց: Այն ընդհանուր, համամարդկային բնաւարութիւն կող պատճառներից գուրս, որոնք առհասարակ ազգերի կեանքում պայմանական հոսանքները անտարբերութիւնների մեր կեանքում: Ամանաւանդ ներկայ ճգնաժամամբ այս ժամանակ, կեանքում հասարակական հոսանքները, — այստեղ մեր կեանքում: և մանաւանդ ներկայ ճգնաժամամբ օքերում, կենդանի գգացմունքներով աղքատ, բայց կենտրոնախոր, ինքնապաշտ մնազդներով հարուստ հայի հոգեկան կազմն է, որ

յաճախ հանդէս է գալիս իր վատ կողմերով Եւ հաս-
կանալի է. եթէ մեր պատմութիւնը զգալի չափերով
գուրէ ։ Եղել բարոյական առողջ բնագններ կրթելու,
անձնական դիտութիւնների առաջ կանգ չառնելու, միա-
բանութեամբ ընդհանուր պէտքերին հետևելու, կուցց
չվախսենալու, զենքը գնահատելու վարժութիւններից,
շատ բնական է, որ յեղափոխական շարժումը չէր կարող
ոչ ըստ քանակի և ոչ էլ ըստ որակի այնպիսի հող-
գտնել մեր մէջ որպիսին կարող էր լինել մի ուրիշ
ժողովրդի մէջ որի պատմութիւնը — միւս հաւասար
պայմաններում — այդպիսի վարժութիւնների համար
նրան ասպարէզ է տել: Աչա ինչու յիշեալ դէպքերի
ամենամեծ մասում կարելի է տեսնել ինչ ուզում էք,
բայց ոչ ունէ ապացոյց յեղափոխական գաղափարի կամ
յեղափոխական միջոցների անպատճակարգմարութեան:

Ի՞նչպէս վարեւը այդ կարգի բազմազան հակառակորդների հետ — դա անհատական խնդիր է իշարկէ: Մէկը կարող է արտայայտել արդար վրդովմունք, երբ տեսնում է, որ մարդիկ — ըստ Վօլտերի — ոգտում են մտքից. միայն նրա համար, որ արդարացնեն իրենց անարդարութիւնները և գործ են ածում խօսքեր միմիայն նրա համար, որ ծածկեն իրենց մտքերը¹. միւսը կարող է բաւականանալ սոսկ արհամարհանքով, որովհետեւ կան դէմքեր, երբ անարժան հակառակորդների հետ լուրջ խօսելը միայն անպատճութիւն է բերում ձեր գաւոնած գաղափարին. երրորդը կարող է նոյնիսկ ներողամիտ լինել՝ ինքատի. ունենալով, որ մարդիկ շատ յաճախ կարող են իրենք ել չիմանալ՝ թէ իրենց և ձեր մէջ սկատող զանազանութիւնները բղխում են ոչ թէ պարզ գիտակցութիւնից կամ բարեխիզմ վերաբերմունքից դէպի հեղ այլ այն կոյր բնազդներից, որոնց արմատները շատ հեռու են թաղւած, որպէսզի նրանց անգիտակից զօհերը լարողանան հասկանալ իրենց թշնառութիւնը: Բայց միան, որ պէտք է անկասկած արտայայտվի բոլոր գէպքերում և բոլոր լոկերների մէջ դա վերջինիքը այն որիութիւնն է, որով նրանք երբէք չպէտք է աղդւեն ոյդպիսի երեսյթներից, որովհետեւ գրանց մէջ չկայ ոչ ի բանաւոր հիմք մեղ ոգեւորող գաւանանքի դէմ: Մենք նում ենք փարբամասնութիւն, բայց այդ փոքրամասնութիւնը չէ, որ պիտի ենթարկէի անսարբերների, ենոնպահների և ամեն կարդի ճիզվիթների, իմսստակերի կամ շառլատանների բազմութեանը: «Այս կամ ոյն ընթացքը, որին հետեւում են (որոց հասարակական լրայմաններում իշարկէ — աւելացնենք մեր կողմից) ի քանի, բայց միշտ աւելի եռանդ ու ն մարդիկի առնում է լոնդհանուր կարգ, լոնդհանուր սովորութիւն՝ շնորհիւ այն հանդամանքի, որ ուրիշներն ել ստեղնանում են նոյն ընթացքին: Առաջնորդաց մարդանց օրինակին հետեւով՝ կազմւում է վերջապէս սդհանուր համոզմունք, որ բոլորերեան ել անհրաշշատար պէտք է լոնդհանան այնպէս և ոչ ուրիշը

կերպն, — ասում է յայտնի պրօֆէսօր Սերգէեվիչ իր դասախոսութիւններում ուսւաց իրաւունքի մասին: Մեղ, վարանումներ չեն հարկաւոր, այլ հաւատ, մեզ իսուաքեր չեն հարկաւոր, այլ գործեր, մեզ թերահաւատաւութիւն չեն հարկաւոր, այլ եռանդ, մեզ ատանումներ չեն հարկաւոր, այլ վճռողականութիւն և յանդընութիւն: Կրկնենք անմահ Դանտօնի խօսքերը.

Բաւական է, որ հայ ժողովը դի ազատութեան գառ
զամիարը նվիրական է ամբողջ ազգի և համայն
մարդկութեան ամենահամակրելի տարրերի առաջ, բաւ
ական է, որ յեղափօխական կոփել թելադրում, բրդ-
խում է ինքնըստինքեան այն սոսկալի իրականութիւնից,
որի հրեշտակը ծանրութիւնը այս կամ՝ այն չափով
զգացել և զգում է ամեն մի հայ մարդ։ Հետեւողներ և
զինակիցներ, համամիտներ և գաղափարակիցներ, համա-
կիրներ և ամեն կարգի ընկերներ անշուշտ կունենանք,
անշուշտ կը գտնենք։

Այս, թողնենք մեռելներին թաղեն կրենց մեռելները
և ամենայն արթնութեամբ առաջ տանենք մեր ար-
դար կուրլ: Զը մոռանանք երբեք, որ եթէ հայր իր
տնուր անցեալում ժառանգել է շատ բացասական
յատկութիւններ, ապա այսօր նա արդէն այն բացառիկ
դրութիւններից մէկումն է, երբ չարիբը կարող է զար-
դանալ չտեսնւած չափերով և վերջապէս հարւածել
մեր ազգային ամբողջ մարմնը, եթէ թուլանայ մեր
դատի համար բոլորով ձայնը երկրում, ուր այսօր
յարաբերութիւնները այնքան սրւել են թշնամու հետ,
որ հայր ապահով չէ կեանքի ամենատարրական պաշ-
հանջներում և իրաքանչիւր բոլոք կարող է անպատճելլ
թալանւել մորթւել կամ սովորական լինել, կռւից հեռու
մնացող ժողովրդի մասը ստիպւած է իր գոյութիւնը
պահպանելու համար գիմել ամենասպանիչ միջցների—
գաղթականութեան կամ գիտային հանդամանքներին
յարմարւելու ամենաստորացուցիչ ձեւերի: Ըսկենելով
տար երկիրներ, առանց տեղական պայմաններին ծոնօթ
ինելու, առանց տեղական լեզուները խմանալու, զուրկ
ունենալու հապատաւոր միջավայրից, հայ գաղթականը հար-
ադրուում է ամելոց խելքը լարել գժւար պայ-
հաններում իր ապրուստը ապահովելու համար: Եւայդ-
ուել ամեն միջոց սրբագործուում է նպատակի առաջ,
բրովհետև սկզբունքները կարող են վիճելի լինել և
ամենայն գէպս առանց գրանց կարելի է ապրել իսկ առանց
ացի՞ ոչ: Երեւակայեցէք ուրեմն խզձի այն ձկունութիւնը,
որի և հոգու այն այլանդակութիւնները, որ այդպիսի
պայմաններում օրէցօր պիտի զարգանան գաղթական
այ տարրերի մէջ: Իսկ երկրում մացողները հայր
ինտի ապրի այն այլանդակութիւնները, որ այդպիսի

է միայն նրան հարստահարելու, ուտելու, մորթելու, ջնջելու
համար: Անկարող այս կամ այն պատճառներով ուժին
հաւասար կամ գերակշռող ուժով դիմադրել նրա
ձեռքի տակ մնում են միայն ինչնապաշտպանութեան
ամենակրատորական ձևերը, և իհարկէ արագօրէն նա
սայթաբում է պատճական չափիքի¹ թեք մակերպայթավի
կրօնափոխութիւն, որ Ֆանկաստանում համանիշ է
ազգուրացութեան, ամեն սրբութիւնների ոտնակինում,
խարդախութիւն, կեղծիք, անվերջ ստորութիւններ —
բնականաբար հաւատոյ հանգանակ են դառնում երկ-
րում և ապականում ժողովրդի ոգին, բժացնում նրա
մէջ անձնական արժանապատռութեան, ազնւութեան,
վեհանձնութեան, արդար զայրոյթի և համարձակ վրէժ-
խրնդրութեան ամեն-մի կենդանի զգացմունք: Բացարձակ
և անդարձ այլասեռումն, գարշելի հակումների մի հրեա-
կան խառնւածք, մի այլանդակ, մի հրեշաւոր տիպ, որի
առաջ միայն զգւանք պիտի զգայ ամեն-մի օրինաւոր
արարած, — ահա այն սոսկալի հեռանկարը, որ այսօր
սպառնում է մեր ազգութեան գուցե աւելի՝ քան երբեկցէ:
Եւ մենք, որ այնքան խորապէս զգում ենք պատմու-
թիւնից ժառանգած մեր ազգային թերութիւնները,
մենք, որ այսօր բողոքում ենք դրանց դէմ բարձրաձայն, —
մենք չենք իհարկէ, որ պիտի անսարքեր լինենք դէպի
մեր ազգային բարյական նկարագրին աւելի ևս սպառնա-
ցող ժամանակակից մեծ վտանգը:

Սակայն ի՞նչ միջոց կարող է ներկայ պայմաններում
լինել աւելի նպատակայարձար այդ բարոյական այլա-
սեռաման դէմ կրւելու համար, քան յեղափոխական
ուղին, որ մի կողմից պահանջում ու վառ է պահում
սերնդի մէջ անձնականը հասարակականին ենթարկելու
ամենամեծ առաքինութիւնը և միւս կողմից՝ ձգում է
մի ապագայի, ուր կարիք չպիտի լինի այն պակասու-
թիւնների, որոնք անհրաժեշտ են դառնում այժմ՝ իբրև
դոյլութեան համար նպաստաւոր առաւելութիւններ։
Այս, յեղափոխական դժւար կորին է, որի ընթացքում՝
թշնամու դէմ կուրծքը կրծքին դիմագրաւող իր կեանքը
հայրենիքի սեղանին զգհող հայր անձնւիրութեան սուրբ
կրակով տաքացնում է ժամանակակից աճող սերնդի
սիրտը և ժողովրդի ամենաթանկարկին այդ մասի մէջ
կենդանի պահում ազգային օգոս պայծառ հակումները։
Դա, այդ կորին է նաև, որ նպատակ ունենալով տա-
պարել Տաճկահայաստանում տիրող կործանիչ կարգերը,
պիտի բերէ մարդավայրել կեանքի համար պահանջող
այն մաքուր մժնողորդաց, որի մէջ միայն կարող են ճոխ
կերպով ծաղկել ժողովրդի գրական հակումները։ Բարյա-
խոսական քարոզները չեն, որ կարող են բարձրացնել մի
ժողովուրդը։ «Սովոր մարդը ականջ չունի», ասում է
առածը։ Հայր Տաճկաստանում այսօր աւելի է գժբախտ
քան մի սովեալ և եթէ նա կարող է փրկել դա կը
լինի մոմիայն այդ անսահման գժբախտի աղաղակներին

արձագանք տւող կենդանի օրինակների կախարդիչ
ուժով և որ գլխաւորն է շնորհիւ այն նոր կարգերի,
որոնք կը տան նրան և՛ հաց, և՛ ականջ և՛ ուրիշ շատ
բաներ էլ որոնցում նրա պահանջները այսօր այնքան
օրհասական են:

«Սաքինսէրը—ասում է ամերիկայի սօցիօլօգ Ռոզարը—
որոնելով այն պատճառները, որոնք պայմանաւորում
են ցեղերի համեմատական ճշմարտասիրութիւնը, դալիս է
այն եղբակացութեան, որ «բանակալ կառավարութեան
դոյլութիւնը կամ բացակայութիւնը առաջացնում է
կեղծիքի կամ ճշմարտասիրութեան գերակշռութիւն», եւ
այնուհետեւ բաւական համոզիչ կերպով բացարում
է, որ խարեւայութիւնը բնական հետեւանքը է երկիւղի
եւ հարստանարութիւնների. . . Ոչ մի կասկած չկայ,
որ ազատութիւնը ներշնչում է անկեղծ
ծութիւն, ինչպէս եւ ուրիշ առնական
յատ կութիւններ, իսկ ոսրկութիւնը եւ
բռնակալութիւնը սովորաբար անքար բռնակ-
կան ացնում են. . . Խաբերայութեան բոլոր տեսակ-
ներին մարդիկ փիմում են իրեն վատանդից պաշտու-
պատահ եւ լուծիքի գործիքից».

Եւ մենք կը զտւենք մեր բարոյական հակոռերի մէջ,
կը խեղդենք իր արմատում մեզ վաս այնչափ թանկ
նստած և այսօր աշաւոր չափերով մեզ սպառնացող
բարոյական սպականնաթեան մեծ չարիքը, երբ կարիք չենք
ունենալ անվերջ վտանգներից պաշտպանելու գոր-
ծիքին», երբ յախուռան և անդարձ վճռողականութեամբ
օր առաջ կը հասնենք մեր շարժման նպատակին:

ГЛАВА II

Ֆիւրալի օր մ'էր, թէև գարնայնի
Աւ էր, ամպամած ձակատը երկնի,
Վերաէն կատղած շանթեր ցոլային,
Ահով ու դողով սրտեր լիքնէին:

Յուսակտուր մերթ երկրին կը նայեմ,
Մերթ ալ ամպալի երկինքը դիտեմ. —
Իմ շուրջը անխօս պատեր են միայն,
Հեռ ինձ կարեցիր վայրեր սրբազնա:

Օստար են ինձի խուցեր, տաճարներ,
ՕՇ, չեն ձայնակցիր իմ մաշւած սրտին,
Գուցէ, գուք, ամպեր, սևաթոյր ամպեր,
Մեղքնայիք աբսորւած ողբին:

Կեցիք, ով ամպեր, կեցիք, ձեզ լսեմ,
Սիրտս ձեր սրտին մէջ թափել կուզեմ.
Ըստ ցաւեր ունիմ, վշտեր անհամար,
Ար կեանքս մատաղ կը մաշեն իսպառ:

ԱԵՑԻՔ, ՎԱՐԿԵԱՆ ՄԸ, ԷԵՑԻՔ, ՃԵՂ ըսեմ,
ԻՄ ԱՐՄԻ ցաւերն ՃԵՂԻ ԵՍ պատմեմ.

Գառնաշունչ ձմռան այն սաստիկ ցուրտին
Զիս հայրենիքէն հեռու քշեցին. . .

Զիւներ ճեղքելով ճամբայ բանալով
Անցայ շատ լեռներ, լալով, ողբալով:

Անպատմելի են իմ բոլոր տանչանք,
Մինչև որ հասայ սրբազան այս վանեք...
Ըստք, ով ամպեր, ըստք ինձ տեսնեմ,
Կը կարեկալք ինձ, ինչ ինչ որ կը խօսիմ:

Կուրուսեր եմ ես հայրենիք սկզբուն,
Արօտցեր սրտանց իմ ընկերներուն,
Որ գուցէ նոյնակս քշւած են արդէն
Ամամ մեռած անդութիւն գահին ձեռքէն
Ան, իմ հայրենիք՝ պղծւած, աւերտած,
Վանք ու տաճարներ հիմնաւեր քանդւած.
Զիայ ընտանիք, չիայ գերգաստան,
Ար չէ գիշատիր տաճիլը գաղան:

Մայրեր սգաւոր սևեր են հագեր,
Մոխրակոյտերու վրայ են նստեր,
Կուլան ու կողբան Աստւած կը կանչն,
Իրենց սիրելիք գտնել կը խնդրեն:

Նայէք, ով ամպեր, նայէք վերեն,
Կը տեսնիք իմ մայր դուք անոնց մէջէն:
Հոն ես մայր ունիմ, մայր մը վշտահար,
Անցիւ ցաւերէն եղած գալկահար:

Նա ալ սեաւոր, սրտիկ սգաւոր,
Տւած է զոհեր, զոհեր ահաւոր —
Թաքնւած տունտեղ ամայի այգիք,
Կորուսած երկու սիրատուն օրդիք...

Կ'ողքայ օրն ի բուն, կանչէ սիրելիք,
Արցունք թափելով զերթ ծովի ալիք:
Հանգիստ ու գագար նա չունի երբէք,
Կանցընէ օրեր գառն սրտավերք...

Ըսէք, ով ամպեր, ըսէք, ձեզ մատաղ,
Մեր տան վրայէն չէք անցեր լալով
Եւ չէք տեսներ իմ մայրիկը, աւաղ,
Իր զաւկաց կակիծէն փշւած հօգով...

Դեռ աւարտ չառած կեսնքիս պատմութիւն,
Նորէն լսեցի ահեղ գըզըրդիւն. —
Ամպերը հուժկու իրար ձեղքեցին,
Հարցիս պատասխան, աւաղ, չունին. . .

ԺԵՆԻԱ

Մարտ 1901 թ.

Թ Ղ Թ Ա Կ Ց Ո Ւ Թ Ի Ւ Ն Ե Ր

Ն Ա Մ Ա Կ Վ Ա Ն Ե Ւ

1 յունար 1901

Անցաւ հին տարին և հին դարը. եկաւ նոր տարին
բայց մեր գարդեր կան և կը շարունակւին: Պաս-
պուրականի 1900-րդ տարու յեղափոխական կեանքը
անշնուկ անցաւ, սակայն դիտողի համար ուրախալի
նորութիւններ պակաս: չէին: Կոտորածի և սովի սար-
սափներու տակ թմրած ժողովուրդը սկսած է ուշիկ
ուշիկ ուշաբերել և լրջօրէն մտածել իր վիճակի վրայ:
Անցեալի կուսակցական կոփւներ զգւելի կերևին այլևս
ամէն յեղափոխականի և բոլորը կաշխատին ձեռք ձեռքի
տալով գործել թշնամին գէմ, բացի փոքրամամուռթենէ
մը, որոյ մասին պիտի խօսնը ժամանակին: Ժողովը-
դեան ամէն դասակարգի գոյնը և նկարագիրը բացար-
ձակ երևան եկած է. յեղափոխական փոքրամամուռ-
թիւնը կուռ և կազմ կը շարունակէ ընթանալ իր փշոտ
ճանապարհը քազմաթիւ համակրողներով, իսկ հակա-
յեղափոխականներու խումբը, որ կազմւած է ընդհան-
րապէս հարուստներէ, թրբամոլ անբարոյականներէ, և
յուսահատւած: թուլամորթ հին յեղափոխականներէ,

ամէն ձիգ կը թափեն թումբ բարձրացնել յեղափո-
խական գաղափարի հոսանքին առջև՝ զանազան խոչըն-
դուսներ հանելով կառավարութիւնը մատնիչներու հետ
համախորհութիւն կը շարունակէ իր հետապնդումները
և իրեւ թէ արտասահմանէն եկած նոր մարդ ի կ-
ներ կը վիսառէ: Քէու Չարգանդեան և ընկեր գաւա-
ճան Սէմերձեան Յովհաննէս մատնիչներու խումբը զօրա-
ցնել կը ջանան նոր կեցուու հայերով: պատրւակներու
կը լուսական խումբարկութիւններ սկսելու համար, իսկ այդ
պատրւակները ստեղծելու իրենք չեն համարձակիր, քանի
որ երկիցս խայտառակւեցան (թէև անշուշտ օքերս քան
մը կը հնարին, անգործ մատնիչն ամսական ո՞վ կու-
ռաց): Սակայն, ինչ որ ալ լինի, յեղափոխականի հա-
ւատը իր գործի յաջողութեան համար մեծ է և ան-
սասան: նա յօյս ունի որ պիտի կոտրէ օր մը զինքը
կաշկանդող շղթաները, պիտի փշրէ ամէն թումբեր և
պիտի համանի իր ցանկալի նպատակին: նա համոզւած
է, որ դեռ շատ տանջանքներ և փորձակեններ կը լուսպասէն
իրեն: նա գիտէ, որ գեռ իրեն պէս շատերուն արիւնը
պիտի հօսի, և այդ արիւնն է, որ պիտի փտեցնէ գերու-
թեան շղթաները: նա հաւատացած է, որ ոչ մի նպատա-
կաւոր զոհ ապարդիւն չանցնիր, — և ահա ատոր համար
է, որ իր անձի մահով ազգի ազատութիւնը կուզէ
ապահովել:

Ամօթ, հազար ամօթ այն դասակարգին, որ գերու-
թիւնը ու անպատւութիւնը նախադաս կը համարի քան
մահը: արդպիսիններ թիւրքէն ալ վատ են: Վասպուրա-
կանի հարուստներ թող անզգայ մնան և իրենց ոսկի-
ները շատցնեն, փոխանակ գէթ իրենց պաշտպանութեան
համար յեղափոխական հոսանքը զօրացնելու: վաղը, օր-
հասի ժամանակ, աւանդներ պիտի կարդան թիւրք դա-
հրձներու՝ ոտքի տակ իրեւ սողուն ճզմւած, մինչդեռ
իրենց միւս ծուռ և սրի կայ եղալիքները քիչ մը
անդին հրացան իձեռին խրոխարար պիտի կուին վաս-
պուրականի մատնիչներ թող իրենց արեան գին ոսկի-
ներու հետ նախատինք և անպատիւ անուն թողնեն
իրենց ժառանգներուն վաղը, ազատութեան օրին, անձ-
նւէր յեղափոխականի որդին բարձրագլուխ իր հօր ա-
նունով պիտի պարծի, մինչդեռ իրենց մատնիչներու
որդիները անէնք պիտի կարդան իրենց հօր յիշատակին
և փոխանակ խունկի թուփով պիտի օծեն իրենց հայ-
րերու գերեզմանները:

18 յունար

Մեր կասկածը իրականացաւ: կառավարութիւնը խո-
զարկութեան սկսաւ և ինչ որ վաշա զներ կը
փնտուի: Անոր կարծիքով՝ այդ մարդիկը արտասահմանէն
եկած են, ուրեմն սոսկալի վտանգաւոր մարդիկներ են:
Անցեալ տարի Ֆիշտ այս օրին էր, որ գարձեալ ապար-
դիւն խուլարկութիւններ ըրաւնոյն նպատակով: Մկրտիչը
և Ապօ կոմիսարները գիշերանց 50-60 զինուրներով
երկու տուներ խուլարկեցին առանձիններ առանձիններ սա-
կայն ձեռնունայն վերադարձան: Կատղած շան պէս այս
և այն կողմերն ինկած են և ամէն միջոց—սպառնալիք
թէ հրապոյր: կը գործածեն այդ զաշաղներու հետքը գրտ-
նելու համար: Վերը յիշած հայ կոմիսարը՝ գրգուած
իր անյաջողութիւններէ՝ գինետունները սկսած է յա-
ճախել և զանազան պատրւակներու տակ այս և այն
հայը ծեծելը Անցեալ օր գինետուն մէջ երկու հայերու
անչափ կը գանակոծէ, որ մին կիսամեռ վիճակի մէջ

տուն կը տարւի: Կը լսի՞ թէ կուսակալն բողոքած են: Անշուշտ խուզարկութիւնները իրարու պիտի յաջորդեն, թէև ապարգին: Տաճիկներու մէջ կը խոսւեր արդէն, թէ ֆեղայիներով լիցւած է վանը և խուզարկութիւններ պիտի լինին: Մատնիչներ, ոստիկաններ, կառավարական պաշտօնեաներ, անօթի մահմեդականներու ամրող լեդէն մը ծախսած լմնցուցած են անցեալի կողոպուտները և նոր դէպքեր կուզեն ստեղծել իրենց շահատականթիւնները սկսելու համար: Աչա այս տարին է, որ տարաձայնութիւններ կը տարածէ ամէն կողմ և կ'աջակցի կառավարութեան: Ցաւալի կէտը միայն հոն է, որ ժողովորդեան մէկ մասը գեռ կը շարունակէ մնալ թմրութեան մէջ և գեռ չէ կարողացած թօթւել իր միտքը կաշկանդող ստրկութեան կապանքները և նետւիլ գործունէութեան ասպարէզ: Թող լաւ հասկնայ այս չէզզը տարրը. պիտի գան դարձեալ սարսափի օրերը, և այն ատեն ամէնքս ալ միասին պիտի ուզեն խողխողեր: Սակայն մենք չպիտի շեղինք մեր նպատակն, չպիտի ծուենք մեր վիզը և զէնը ձեռին պիտի կուտնք: Եթէ իրենք ոչսարի պէս մորթւել չեն ուզեր, թող սթափին և իրենց գլխու ճարը տեսնեն: Այ թշնամին մեզ պիտի խնայէ և ոչ մենք անոր. այդ օրը կառավարութիւնը մեզ ամէնքս ալ իրեւ եղայր պիտի նկատէ, և մենք ալ իրեւ եղայր է, որ իրենց կը զգացնենք:

Այս ինչ ներկայ տողերս լմնցուցած էի, տաճիկ վայրենաբարոյութեան նոր լուր մը ստացայ: Այս գիշեր 6-7 զինւած թիւրքեր Արարուց թաղը հայ տան մը վայ կը յարձակին: բունութեամբ ներս կը մտնեն և հայ հարս մը առեանգելով կը տանին՝ ամուսնը քանի մը տեղէ վիրաւորելէ վերջը: Կինը Ստորին կարկառու բերկի գիշէն էր՝ Ազատ անունով: Աստիկանութիւնը իրը թէ հետամուտ է կինը դանելու բայց ո՞վ գիտէ թէ իրենց տունները չէ:

Ն Ա Մ Ա Կ Բ Ա Ղ Ե Շ Ե Ն

15 Հոկտեմբեր 1900

Բաղէշ նահանգը անլուր անգիտութիւններու և զգւելի, անամօթ՝ ոճրագործութիւններու թատերավայր մ'ըլլալէ դադրած չէ տակաւին: Խիզանէն մինչեւ Տարօն, Սղերդէն մինչեւ Խլաթ, ամէն տեղ, ամէն անկիւն, արիւն և սարսափի կը հոտի: Այս նահանգը իր հարազատ դիւցազն զաւակներու քովքովի մուցած է նաև ամենակեղտուտ և ոճրագործ դաւաճաններու լէտէն մը, որոնք՝ զուրկ ազդային և անձնական արժանապատութենէ, իրենց տան պատիւը թիւրք յարատ՝ և վաւաշոտ պաշտօնեաններու քմահաճոյքին յանձնած՝ հետամուտ են գիշեր ցերեկ բնաջինչ ընելու յեղափոխական տարրը: Սի մօն, Աշուր, Նատալի, Մուշեղ, Տիգրան, Ասոնց մեքենայութիւններուն զոհ գնացին քաջամարտիկն Գուրգեն իր ընկերներով Նեմրութիւններ 98-99 տարեցընաններու մէջ զոհ գնացին ասոնց լարած թակարդներուն, իրենց շուրջը աչ ու սարսափ տարածելէ վերջը: Ասոնց մեքենայութիւններուն զոհ գնացին քաջամարտիկն Գուրգեն իր ընկերներով Նեմրութիւններ հակայ, պաշտելի Աշուր, Նատալի իր հարազատներով և ովք գիտէ գեռ քանիններ և պիտի երթան միանալ այս քաջերուն: Ամենացաւալի և դժբախտ կէտն այս է, որ յեղափոխականներու գործունէութիւնները շարունակելէ:

Կան զինւորը ոչ միայն պարտաւորւած է կոիւ մզել հասարակաց թշնամիին գէմ, այլ ստիպւած է նաև պարապել արս վատերով որոնք գիմակաւոր և անդիմակ կը վիտան ամէն կողմ, մութիմին մէջ կը սողան և մեքենայութիւններ կը սարքեն, իսկ բաց հրապարակի վայ ամենաթունդ ազգասէններ կը ձեւանան, աչա այս կոիւն է ամենագթւարն: Սակայն յեղափոխական զինւորի անկուն հոգին, անգիտակ յուսահատութեան դառնութեան, առգորւած և ոգեկորւած միշտ ազատութեան գաղափարով՝ անահայ կը մարտնչի այս երկու թշնամիններու գէմ ևս: Ազգիւրի 21 մատնիշներէն ե օ թը գլորեցան գողովքը, զոր արդէն ժամանակին լսած կը լինիք: Խլաթի մէջ իմիջի այլոց, այս մայիս ամսուն Ծղակ գիւղի ուս ջնդու և Սագ գիւղէն մատնիչ կին մը գացին միանալ Մամբրէններու, Թիւթիւնձիէններու վոհմակին: Յուսանք որ մօտերս մէկ քանիններու անուններն ևս արձանագրւին յեղափոխութեան սե տօմարներու մէջ:

Բայց ինչ օգուտ՝ երբ դաւաճանութեան հրաւերը բարձրէն կուգայ: Խող-Օրմաննեան, Պօլսի աղբերը բաւական չհամարելով իր կնճիթը կերկնցնէ մինչև հոս: Ազգիւրի համար այնչափ ջանք և ճիգ թափելէ վերջ, երբ հաղեւ քիչ մը շոնչ առած էր անոր մահւամբ, աչա նոր Ազգիւրներու վերերեւումը. կրկին սկսած է վրուգել իր խաղալ քունը և գեռ ամառւանէ հրահանդներ զրկած է բաղէշի առաջնորդին, որպէս զինւորակ առաջնորդ համար անվանակ անոնց ետևէն իրենց սովորութեան համեմատ, խեղձ գիւղացիններուն վրայ կը թափեն իրենց բարկութիւնը. Խոշրուած անունով գիւղացի մը իր 15-16 տարեկան նատրօ անուն գաւակին հետ կը սպաննեն և մէկ քանիններ ալ կը վիրաւորեն: Կառավարութիւնը վարձարաւութեան համար անոնցմէ մէկ քանիններուն հրացաններ կը բաշխէ:

Յուլիս 21-ին մեր զինւորներէն Ճարտար և Սաքօ Խլաթի Թուխ գիւղը՝ տան մը մէջ կը պաշարւին Շանկօ և Հուլյաշ աշերէններէն: Ճարտար և Սաքօ, մին տան ետևէն, միւսը գուռնէն, անվեհներ գուրս կը ցատկեն հրացան ի ձեռին և բաւական հրացենաձգութենէ վերջ՝ լեռ կը բարձրանան անվնաս: Քիւրդեր, փոխանակ անոնց ետևէն իինալու, իրենց սովորութեան համեմատ, խեղձ գիւղացիններուն վրայ կը թափեն իրենց բարկութիւնը. Խոշրուած անունով գիւղացի մը իր 15-16 տարեկան նատրօ անուն գաւակին հետ կը սպաննեն և մէկ քանիններ ալ կը վիրաւորեն: Կառավարութիւնը վարձարաւութեան համար անոնցմէ մէկ քանիններուն հրացաններ կը բաշխէ:

28 Նոյեմբեր

Բաղէշի Խլաթ, Դատիկ և Կիւզէլ-Դէրէ գաւառներուն մէջ կառավարութիւնը նորէն սկսաւ խուզարկութիւններ ընել: Բոլոր գիւղերը զինւորներով լիցւած են, իսկ գիւղեր՝ կազմ և պատրաստ՝ նշանի մը կըսպասեն թիւրք զինւորներու օգուռութեան համենելու և գրոհ տալու խեղձ աղքատ ժաղավարեան վրայ՝ աւարելու, յափշտակելու և սպաններու միակ նպատակով: Սակայն հակառակ այս ամէն խստութիւններու յեղափոխականը չդադրիր իր գործունէութիւններ շարունակելէ:

Անցեալ օր մատն ի չ մը ևս գնաց հանգչելու Մուհամետի գոգը: Կծւակ գիւղացի ուս Պետրոս, ժամանակի մը ի վեր սկսած էր յայտնի համարձակ մատնութիւններ ընել և լրապար յոխորսաւ յեղափոխականներու դէմ սպառնալով մինչև անգամ, անոնց ըն-

տանիքի պատույն։ Վարձատութիւնը չուշացաւ, ամուսնու սկիզբը, երբ քաղաքէն կը մերադառնար, մօսինիր հջնդ գնտականներ անոր մարմինը ծակոտեցին իր գեղէն 10 վայրկեան հեռու և գիւղը որը ընտղ զինորներու աշ-քին առջև։ Զինորները օգնութեան կը վազեն, բայց աշաքենիքը արդէն աներեսոյթ եղած էր։

Սյս դեպքը առիթ մը եղաւ կառավարութեան ձեռքը
և պատրասէ իր պաշտօնեաներուն՝ ժողովուրդը խոշ-
տանդելու համար Խաչաթ գաւառի դահճճ, չեղքեղ Աղի-
պէ, անւանակից և արժանի գործիք դաշտան Ալի-փառ-
շայի, մատծ է հայ գիւղեր. մայ, այն կիներուն, որ
տգեղութեան համբաւը չունին, մայ այն հարուստներուն,
որ մատնէց ըլլառը արժէքը չունին, վայ այն երիտա-
սարդներուն, որ գիւղի զապթիէներու և հարկահաւաք-
ներու քմահաճոյքին գիմադրած են. ամենքն ալ առ հա-
սարակ գանակոծութեան, քոնաբարման և բանափի կը
դատապարտւէն: Օրինակներ անպահաս են: Աւոտապցի
Պետրոս անունով մի քանամեայ երիտասարդ ձեղբա-
կալւելով՝ կը գանակոծւի, կը դադւի, կը բռնա-
քար բւի և ապա քաղաքի բաններ կը փոխադրւի, այն
ամբաստանութեամբ թէ կապ ունի յեղափոխական զին-
որներու հետ, մինչդեռ իր միակ յանցանքը Աւրատապի
քիւրդ պէկին անհաճոյ լինելին եր:

Կառավարութիւնը կծւակ գիւղացիներէ պահանջեց,
որ ուս Պետրոսը սպաննող Աւագը, որ 4 տարիներէ
ի վեր փախստական կապրի, իրեն յանձնեն: Գիւղացի-
ները կը յայտարարեն՝ թէ նա շատոնց ի վեր փախստա-
կան է և թէ շատ անդամներ պինութիւնու հետ կուտած
է ուրիշ տեղեր. թող կառավարութիւնը բռնէ: Վերջիննօ-
նիրը կը պնդէ իծւակցիներ կ'առաջարկէն: „Մեզի քսան
կ'նք տւեր, և մենք մէկ ամիսէն չեզ յանձնենք Աւագը“:
Առավարութիւնը կր մերժէ:

Այս խուզաբեկութիւններու ժամանակ, մեկ քանի հայ մատնիչներու առաջնորդութեամբ, 80-ի չափ զինողներ կը պաշարեն Զրհոր գիւղը՝ Սերոբի Հօրեղոր որդի ՅԱ-ԿՈԲԸ ձերքահաջելու համար: Յակոր մինակ գիւղի քոփի ոլորբը կը բարձրանայ և կըսկսի կռւիլ քաջաբարը: Քրոբեր և մօտակայ ուրիշ գիւղերու զինողներ օդինութեան կը համեմին պաշարողներուն: 4-5 ժ ժամ կորեւ մը լերջ Յակոր երեք չորս տեղէ վիրաւորւած՝ կ'իյնայ: Երբ կը տեսնէ՝ թէ այլնս անկարող է կորւը շարուակելու, կը կոտրէ հրացանը: Զինուորներն Յակորի իհակը իր զգեստով և զէնքի կոտրտածներով սայլի մը լրայ գրած անմօլ յաղթանակով մը բաղէշ կը տանին և սպանւած զինուորներու դիակներուն հետ:

Թակորի ժողովքդին աչաւը մը էժխնդրութեան փայտն արտաքալտութիւններէն մէկը, իր հերոսացումնը որտապնդող օրինակ մը ևս կուտայ մեզ, իր հայրենիքի սպատութեան համար կուտողներուն:

ու մերջին ծայր թշւառութեան մատնաւած կին, քոյր և
մարդ թողուցած, հեռացաւ իր պաշտելի հայրենիքէն։
Քանի ամիսներ առաջ Մուշէ վարդապետը կը քար-
կոճէր զարիք մշեցին և հրաւեր կը կարդար գէպի իր
ընտանեած և զաւակաց դիրկը։ Ճիշդ է, եղած են և
կան զարիբներ, որոնց խսպառ ժողոված են հայրենիքի
մէջ իրենց յոյսով ապրողները, բայց հազիւ 100-ին 10
տոկոսու կը կազմէն ատօնը. մնացածները, ամէն բոպէ
պանդիթաւութեան բոլոր դաւանութիւնները յանձն առած,
կը ջանան անսոնց ցաւերին սպեզանի զնելու։ Ի՞նչ ընէ
խեղճ մշեցին. թող Մուշէ վարդապետն և իր նմանները
բարեհանին մտնել արդ զարիմ, քաղցած և մշակ ժո-
ղովրդի ներքին, մութ խաւերը՝ այն ժամանակ արդ տո-
կոսն ալ կը պակսի։

Կովկասը լիքն է 4-5,000 մշեցի զարիքներով, ամէն տարի, 6-7 օր գիշերային գաղտնի ճամբարութեամբ փախուստ տալով, կանցնին սահմանը, դառն քրտինքով հաւաքած կոպէկներով իրենց տան վշտերը ամոքելու համար: Գնալ կայ՝ գալ չկայ սակային: Այդ ամէն տան ջանքներ տեսնող զարիքը՝ նորէն չի յուսահատիք տեսնելու իր սիրած հայրենիքը, տունն և ընտանիքը: Հազարաւոր կրծքերէ ի՞նչ հառաջանքներ կը քրթին: Այս, երանի թէ մէկ անգամ ևս տեսնէ՞ հայրենիքս, տունն և ընտանիքս՝ ի՞նչ կոպէկը բլար“...

Յուսահամատութիւն ևս կար Ա՞ր ժողովուրդ, ո՞ր ազգ
է կամ ո՞ր անհատ չի մռոնար իր տուն, տեղ, երթեմ
ուան ընտանիք, երբ ականատես է անոնց անդարձմանելի
լինակին: Այդ հաղարաւոր զարքիների մէկի տնից գո-
հացուցիչ լուր չի գնար, մէկը կը դրէ: «ոչխարներս տարին»,
իւսու՝ «Եղանակ սպաննեցին», ուրիշ մը՝ «Եղօրս 10 տա-
նեկան աղջիկը փափցուցին» ևին ևնս: Մէկ երկու տարի
ուուջ սուլթան իր ատէ ըրաւ՝ ժողովրդէն չ'առնել
11 միլիոն սօմաննեան լիրա յետամաց տուրքերը: Սար-
ափեկի բան, այդ իրատէն աւելի սաստիկացուց հար-
երու հաւաքումը, երբ մէկ գիւղ օրսական երեք տեսակ
արքահաններ կը զգիւին, կրնաք երեւակայել հպատակ
կողովորի վիճակը անոնց ձեռքը: Ա՞րտեղից տայ փող
այլ, երբ ամէն մէկ միջնամերէ զորկէ և, և մինակ տանու
արիբն է անոր ապաւենը: 500 տուն եղող մի գիւղ
յասօր հազիւ 30 տուն է մնացեր, գաղթողների ապա-
հիններն ալ՝ ներկայ եղող կանանց (տղամարդը օտար
քիիր է) կաշին քերթելով՝ կը հաւաքնեն —այ ձեզ կայ-
երական չնորհ: Հատ գոհ կը լինէր ժողովուրդը, եթէ
ւրաքանչիւրէն իր պարտքը պահանջւէր միայն: Հարա-
ական հաղարաւոր ոսկիներ կարկուտի, պէս կուգան
փարա մը օդուտ չեն բերեր իրենց տանը, աբօսնի
անձարանի-տուրքի պատճառով թիւրք վաշնառուներէն
ունած պարտքին իր տրւի:

Գեղ նորագուսակէ երիտասարդ, տակաւին ամուսնութեան մեղքամիսներն ըվայերած, հանգամանքներէն ստիելալ կը լազէ պանդստութեան, ձանապարհին մաշնչքը տուած, ոի գնացողներուն 60% Հազիւ կրնայ ջջ առողջ տեղերնին հասնիլ. մնացեալները միշտ ո՞հ կերթան հանդիպող քիւրդ աւազակաց: Ամենանեղերպով ապրելով գժբախտ պանդստութը հազիւ կրնայ արին 10-15 ոսկի աւելցնել բայց և այնպէս հւրանչնելու ամփս իր բերանէն կտրելով կամ ընկերներէն արտք ընելով՝ 2-3 ոսկի կը դրէկ ընտանիքին, որիքէ որ պատասխան կըստանայ մօրը լազէան սա խօսքերը.

ଶାର୍କାରୀ ପାଇଁ

3 *јулја* 1901

Մարդակերի ծրագրած տեսակ տեսակ պատմիներու բովէն մշեցին ևս անցաւ: Այսանցնելով ամէն՝ ինչ որ իրեն չամար սուրբ Եր և Նորական — ծնողք, զաւակներ, կաթը, բարեկամներ — վերջապէս մնացեալ կիսամեռ:

նի սէր Աստուծոյ, լած, Յ ոսկի ևս շուշ պարտքով
առ զրկէ և զիս անաստած Հիւսէնից աղատէ. ամէց
օր կուգայ, կամ փարաները տուր, կամ հարսդ կէ
տանեմ¹⁰ կըսէ: Ի՞նչ ընէ զարիբը մէկ անդամ Հիւսէնի
մի անդամ Խալիլ, մի անդամ Օսման և մէւս անդամ
Ապտիւրահման... որ մէկից ազատի՝ չգիտէ. Հիւսէնի և
Ապտիւրահմաններին վերջ չկայ, քանի որ հարկահան
ներու տանջանքէն ազտաւելու միջնորդ ատանցմէն նորմանոյ
պարտքեր դիսկելն է: Աչա այդ պատճառով շատ մը
կանալը և աղջիկներ կը թրթացնեն. առեանդուռ կայ
ու կայ:

Մեր հրոսախմբէն Գէ որդ անուն քաջ երիտասարդը
Առաքելոց վանքի արևելակողմը՝ Մէջքան կը գտնւէր
ուր Հեթինկ գիւղի գաղթականներէն մէկ երկու տուն
հայ կայ: Մատնելով ստիկանները կուռան յանձնարձ
կը շրջապատեն: Գէորդ իր հրացանին զօր տալով կաղապի:
Ուրիշ անգամ մըն ալ Գէորդ երկու ընկերներու հետ
Քերդակ գիւղի մէջ կը պաշարուի Ալա պէէն, որ 100
ստիկանով եկած էր վայն բռնելու: Խսկոն մըր տղերը
գիւղին վերև՝ քարերու մէջ ամուր դիրքեր բռնելով
ցերեկւայ ժամը 9-էն մինչեւ գիշերը ժամը մէկը ան-
ընդհատ կրակ կընեն: Արդիւնքը այն կըլլայ, որ մէկ ձի
միայն կըսպաննեի, որովհետեւ զինուրներն ալ աներևու-
թաբար կը կռւէին: «Պապաիկիս» Ալա պէլը ամօթա-
հար ետ կը դառնայ և Քերդակէն քանի մը հօգի կը
բռնէ ու կը բերէ կը բանտարկէ: Հերոսները պատ են:

Անդամ մը. մեր համբարձումը թերդակի մէջ հիւանդապառկած կըլլայ երկու ընկերով, կը շըջապատճեն, գիւղի պահպանը միայն կըսպաննեփ և իրենք կազմատին:

Ներոքի սպանութեան պատճառ եղող կիշղաշենցիք շենքցիք և Խալիլ ազա կոչող շունը տղաքներէն սպաննած են:

Սըմիւնաբրու Խալիլ ազան թրքաց հեծեալ ոստիկան-ներով և իր սպառապինւած քաջընտիր թիկնապաշներով պըտըտեղու էր ելեր յեղափոխականներու աչէն: Այդ հրեշը պատահօրէն յեղափոխական հայդուկներուն կը հանդիպի, որոնք առանց առիթը վախցնելու կը յար-նակին Խալիլի վրայ: Ուկիսա ոստիկանները կծիկը կը նենա առանց ետևին նայելու: Իսկ Խալիլ իր երկու թիկնապաշներով Մէհմեդի գիրկը կերպար: Հայդուկները վրէժ Սերոբի կը կտրին Խալիլ աղայի գլուխը ան-աժան իր երկու ձեռքերէն: Բաղէշի ոստիկանապետ ողէթ պէյր իր գագանարին վրէժը առնելու համար կը լազէ անդէն (վասնզի թիւքը զինեւալի հետ գործ չունի) էնիկ: Մէմալ գիշերը — կոտորածէն ետքը ամերիկեան և անգլիական բարեկործական ընկերութեանց շնորհի ետեղւած երկու հայ գիւղեր — այրելու: Այդ միջոցին լինեալ հայ յեղափոխական մը գուրս կուգայ յիշեալ իշղերէ մէկէն և արձակ համարձակ հրացանը արձա-երով ու թիւքը գորաց մէջէն անցներով՝ կը գնայ իր

գործին, իսկ թղեթ պելը ու փր զօրքերը բաջանքին չեն ունենար գնտած իսկ արձակել մեր հայդուկին, ոչ այ հետեւի նրան, վասնողի, ինչպէս վերը միշտ թիշտ թիշտ թիշտ պնդեալի հետ գործ չունի, մանուանք ընթեալ յեղամիուսականի — ո, առ սարսափելի բան է թիրքի համար: Հաւա անդամ անցէն հայ թումբերէն այ կը քայնան: Շատերէն օրինակ մը Յունս ամիս մը առաջ նորիկատ դժուոզ Մշոյ գիւղերէն, բանոր պանդուխտները, ըստ սովորութեան, թուով 20-30 մարդ խմբելով՝ առանց անցագրի գաղտադորի հանցնին տաճէաց սահմանը: Հաջի քանի մը ժամ կը նախապարհորդեն, երբ արշալորդ կը բացւի, և միենայն ժամանակ նկատելով թիւքը գիւղացիներէն՝ շըտոն կը կազմեն ու կը նստին հանգստանալու, հաստատ հաւատալով՝ որ արդէն մտանած են Եւ ճշմարիս որ հուտառու հեծեալ ոստիկանները մտա 20 հոգի կուդան շրջապատելու անցէն պանդուխտները. իսկ պանդուխտները, որպէս յարդանք, երբ բոլորը մէկէն ուսցի կը կանգնեն, և եղանակ զօրքերը կը նահանջեն, վախնալով թէ յեղափոխականների հետ գործ պիտի ունենան: Բաւական հեռանայէ վերջ երբ կը տեսնեն որ պանդուխտները տեղերնին անշարժ կանգնած են, այն ժամանակ փոքր ինչ խրախուսաւելով՝ փոքր առ փոքր կը մօտենան պանդուխտներուն և հեռուէն կը սկսին պառազ. ոթէսկիմ՝ ոլոնք՝ առ անց քիտնալու որ պանդուխտները, կասկածի տեղիք շտայրու համար, մինչև իսկ փայտ չեխն վերցուցած հետեւնին: Ահա ձեզ թիւքը և եր զինորդի քաջութիւնը: իսկ զինեալ յեղափոխականին, հետեւի համար թիւքը զինուոնը շատ արիս թիւն: ու ունենալու են, արդ պէս կ'ապացուցանեն փաստերը:

Յեղափոխութիւնը նոր կըսկի գոյակ ական մարդին
դառնալ Յաճկաստանի մէջ: Յեղափոխութիւնը նոր ուժ
կըստանայ Փաստերը մեր առաջն են. Խանասօրի արշա-
ւանքը, Յրօնքի Խաստուրի և լի գեղքերը դող ձկած են
թիւը զինորին և քիւրդին սիրտը, այնպէս որ հայ
յեղափոխականին տեղը զիտնացով հանկերձ՝ առ միշտ
կը խուսափին անոնց հետեւյալ: Յեղափոխութիւնը
կուժովնայ, որովհետեւ թիւը կառ ամփառութիւնը, իբ
արքանեակներ և Փանատիկոսներ՝ յեղափոխականներէն
ներ չտեսնելուն, որքան կրնան իրենց մաշնը կը թափեն
նաղաղ ծորակուրդի և գչանաւորապէս հայ գիւղացիներու
թիւնին, իսի ժողովուրդը այդքան անարջարութիւնները
ունանելու այլևս անէարող, մահաւանդ տեսնելով՝ որ իր
ողոր հարստահայիններէն, կընտրէ իրկու չարեաց փողբա-
րոյնը այսինքն չաւ կը սեպէ գէթ ազատ շունչ
շաշելով մեռիլ յեղափոխական անւան ոտիկ, քան
ինդանի մեռած ըլքալ Սյոյ կարտճառ որ այժմ ամէն
դրտի և հօգիի տէր մարդ կը դիմէ յեղափոխական
իրկարար գրաշակին տակ զինուրբագրելու: Նոյնը կը
ունանի նաև երկրից դուրս: Օրինակ, Առաւաստանէն
աստատ տեղեկութիւն ստացած ենք, որ ուսաց կա-
ալաբութիւնը օր քան զօր զինուրական խստութիւնները
ու լիցնելուն՝ հայ զինուրը փոխանուկ այդ խստութիւննեց
նթարկելու լաւ կը համարի մեռնիլ իր ազգի համար:
Այս տարի Թիֆլիսի մէջ 280 զինուրէն 98-ը փա-
ռուսա են տաշ: Ա՞ըր...

Կ Ե Ն Ս Ա Գ Բ Ա Կ Ա Ն

Ս Ե Ր Ո Բ -Ա Պ Ի Ւ Խ

(Տարրնակութիւնն. — Տես № 2)

Սերոբ՝ Ախլաթի գաւառուի Սոխորդ գիւղէն էր, համբաւաւոր Խչէնց տնէն, երեք հարիւր տարւան հարուստ գերդաստան մր: Հնուց արդէն Խչէն տունը, իր հիւրասիրութիւնով, մեծ անուն և համբաւ կը վայելէր ոչ միայն Սոխորդի, այլև ամբողջ գաւառին մէջ. ոչ մինակ հայեր, այլև օտարագիտներ կը յարգէին այդ տուն ու տեղը, մեծ օճախը:

Այժմ այդ անբաւ հարստութեան ժառանգորդներն էին չորս եղաբարներ, որոնց կրտսերն էր Սերոբ: Երեց եղաբարը Միէն թէ. իս տան մեծն էր և թէ համայն գիւղի տանուտէր ու խնամատար հայրն էր: Միէն իր նախնիքների նման առանձին գութան կը բանեցնէր և ունէր 24 լուծք եզ: Ախլաթի, մանաւանդ Սոխորդի մէջ, գոմէշ չեն գործածեր, այլ եզ կով ձի, էշ և քիչ ոչ խսար: Իսկ վառելիքի համար Մշոյ դաշտեցիներուն նևան կը գործածեն աթար: Իրաւ է, Ախլաթ տափարակ-լեռնային է, բայց անտառուտ չէ:

Սերոբ, իբր հարուստի տան զաւակ և ամենէն սիրականը թուն ական (ազատողդի) մեծացած էր: Իր պատանի հասակին սիրած զբաղումն եղած է ձի հեծնել լեռներ ժուռ գալ և որսորդութիւն ընել: Հազիւքանի մը շաբաթ գիւղի տէրտէրին քով կարդալ գնալէն ետքը՝ կը ձգէ և կը նետէ ինքնինք ազատ բնութեան ու լեռներուն մէջ նսիրելով պատանեկական խօլ տարիները որսորդութեան և քաջագործութիւններու: Որսորդութեան առաջին փորձը սկսած էր գիւղի հաւերէն և կաչաղակներէն, զորս կը զարնէր պարսատիկով, նետ ու աղեղով: Գիւղացիները ախ ու զար կը քաշէին Սերոբի ձեռքէն և հարսներ ամեն օր կուրի կուգային Սերոբի մօր, բայազի վրայ: Մայրը, ճարահատ, կը ծեծէր տղան, որ կը փախչէր սար ու ձորեր, ուրիշ գիւղեր և շաբաթներով տուն չեր վերագառնար:

Երբ քիչ մը չափահատ եղաւ, Միէն, երեց եղաբարը, Սերոբին դաշոյն մը և հրացան մը նսիրեց, հայրենասէր բանաստեղծին ազգօգուտ խրատը կատարած ըլլալու համար.

“Երբ երեխան մծանայ,
Խաղալիկներու փոխան
Հայրը ծեռքը պիտի տայ
Մի մանաբեր հրացան”...

